Սարսափելի պատերազմ է նախապատրաստվում

Հինգշաբթի, 1 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 12:00

Աղջիկս, մի մեծ երկնային պատիժ կիջնի աշխարհի վրա, որպեսզի պաշտպանի անմեղներին:

Մի մեծ չար վայրագություն է նախապատրաստվում, որը կարող է առաջացնել սարափելի համաշխարհային պատերազմ:

Իմ Հոր ձեռքը կիջնի և կպատժի այդ հոգիներին, ովքեր Սատանայի ծուղակն են ընկել: Նրանց թույլ չի տրվի իրականացնել իրենց չար պլանը:

Ձեզնից քչերը, երկրի զավակներ, գիտեն, թե իսկապես ինչ է տեղի ունենում:

Այնքան զգույշ են այդ խմբերը, որ երբ այն ինչ տեսնում եք ձեր առջև՝ երբ ազգ գրոհում է ազգի վրա, դա բոլորովին էլ այն չէ, ինչ թվում է:

Պատերազմ ստեղծելու փորձ է քննարկվում, ոչնչացնելու համար միլիոնավոր մարդկանց:

Իմ Հայրը չի կարող ետ կանգնել: Նա պետք է միջամտի:

Աղոթեք, աղոթեք և աղոթեք, զավակներս, հոգիների փրկության համար:

Ձեր Սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. <<Երկնային պատիժ է տեղի ունենալու>>

Հինգշաբթի, 1 դեկտեմբերի, 2011թ, երեկայոն ժ 11:00

(*Այս պատգամը ստացվել է մի երևումից հետո, որը տևել է 30 րոպե, որի ընթացքում Օրհնյալ Կույս Մարիամն անընդհատ լալիս էր, որը բավականին ընկճել էր տեսանողուհի Մարիա Աստվածային Գթասրտությանը, ով ասում էր, որ սիրտ կոտրող էր ականատես լինել այդ ամենին:*)

Զավակս, իմ վիշտը աշխարհում այնքան ակնհայտ գոյություն ունեցող չարի հանդեպ կոտրում է Իմ սիրտը, երբ Ես տեսնում եմ այդ կորած հոգիներին խավարի անդունդի մեջ ավելի խորը ընկղմվելիս, որից վերադարձ չկա:

Սատանան խոցում է հիմա Իմ զավակներին, մինչ արագորեն գողանում է նրանց հոգիները, ովքեր իրենց սրտերի մեջ չունեն Աստծո սերը: Սարսափեցնող է, զավակս, որ այդ նույն հոգիները գաղափար չունեն, թե ինչ է իրենց սպասում մահվանից հետո:

Տխրության Իմ արցունքները հոսում են մի անվերջ վշտի գետի պես, մինչ տեսնում եմ այն տառապանքը և չարչարանքը, որն Իմ Որդին կրում է այս պահին:

Իմ Երկնային Հոր Ձեռքը պատրաստ է իջնելու երկնային պատժով հիմա աշխարհի որոշ մասերում: **Այն ազգերը, որոնք պլանավորում են սարսափելի ոճրագործություն՝ ազգեր սպանելու համար, խստորեն կպատժվեն:** Ես չեմ կարող ետ պահել Իմ Հոր ձեռքը, այսպիսին է Նրա զայրույթը:

Աղոթեք նրանց համար, ովքեր կանգնած են այս դաժան պատժի առջև: Աղոթեք նրանց հոգիների համար: **Նրանց գործողությունները պետք է կանգնեցվեն, այլապես նրանք կսրբեն միլիոնավորների կյանքը** Իմ խեղճ զավակներից: Նրանց չար գործողությունները չեն կարող թույլատրվել, սակայն նրանք նպատակ կդնեն սարսափելի ավերածություն առաջացնել այն մյուս ազգերի վրա, որոնց տեսնում են որպես իրենց թշնամիներ:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք նախքան երկնային պատիժը, որպեսզի թեթևացնեք անմեղների տառապանքը:

Ձեր սիրող Մայր

Վշտերի Թագուհի

Իմ գթասրտությունը ծածկում է բոլոր ռասաներին, գույներին, կրոններին

Ուրբաթ, 2 դեկտեմբերի, 2011թ, երեկոյն ժ 10:35

Իմ սիրելի աղջիկ, ուժեղ մնա և մտածիր լավ լուրի մասին, որ Իմ Գթասրտությունը Իմ փայփայած զավակների մեծ մասին ետ կբերի Իմ Սուրբ Սրտի մեջ:

Այդ խեղճ դժբախտ հոգիները, որ տվել են իրենց կյանքը չարությանը, քո տառապանքի կարիքն ունեն, որպեսզի կարողանան փրկվել: Չնայած սա շատ դժվար է հասկանալ, և մարդկային տեսանկյունից չափազանց ծանր՝ ընդունելու համար, դու պետք է վստահես Ինձ: Քո սեփական տառապանքը և Ինձ նվիրված հետևորդների տառապանքն ուղղվում է դեպի հոգիների փրկությունը: Այդ տառապանքներից ոչ մեկը չի կորչում: **Այդ նվիրաբերությունը մի ընծա է՝ տրված Ինձ: Հիշիր, որ տառապանքը նաև թեթևացնում է Իմ բեռը:**

Հոգնած Իմ սեփական տառապանքից, աղջիկս, **Ես սպասում եմ, որ գրկեմ Իմ զավակներին վերջականապես որպես մեկ Իմ Հավիտենական Հոր հետ:**

Մտածիր դրա մասին այսպես; Երբ ընտանիքի որևէ սիրելի անդամ գաղթում է և շատ տարիներ անց վերադառնում տուն, որքան շատ հուզմունք է լինում: Որքան ուրախություն: Մտածիր այն տենչանքի մասին, որ ծնողն ունի իր որդու կամ դստեր հանդեպ, որին չեն տեսել շատ տարիներ, և թե որքան շատ բան է վերամիավորումը նշանակում:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ մի հավատարիմ սիրով, զավակներս: Ես անհամբեր սպասում եմ մեր վերամիավորմանը, երբ Ես կկարողանամ գրկել ձեզնից յուրաքանչյուրին ամուր կերպով Իմ բազուկների մեջ և ձեզ մոտիկ պահել Իմ սրտին: Իմ ընտանիքը պատրաստ է վերջապես վերամիավորվել առաջին անգամ այն բանից ի վեր, ինչ Դրախտը ստեղծվեց Ադամի և Եվայի համար:

Ես հեղում եմ Իմ սերը և գթասրտությունը, որպեսզի այն ծածկի Իմ բոլոր զավակներին աշխարհի յուրաքանչյուր անկյունում՝ ծածկելով բոլոր ռասաներին, բոլոր գույներին, բոլոր կրոններին և բոլոր մեղավորներին:

Սպասեք այս մեծ պահին իր ժամանակին: Վերջապես չար ատելությունը, տառապանքը, դժվարությունը, անվստահությունը, ագահությունը, բռնությունը և այլ չարիքը կանհետանան՝ բարիքի համար: Պատկերացրեք, թե դա ինչի նման կլինի, զավակներս: Աշխարհում սիրո և խաղաղության մի նոր հրաշալի դարաշրջան:

Թող ոչ մեկը չկորցնի հավիտենական երջանկության այս կյանքը: Կցանկանայի՞ք, որ ձեր եղբայրներից կամ քույրերից ոմանք չընդգրկվեն: Քանի որ եթե նրանք չընդգրկվեն, ապա կտառապեն Դժոխքի հավիտենական խավար կրակների մեջ հավիտենությունը: Հիշեք դա, զավակներս: Հավիտենությունը: Դրանից հետո ետ գնալ չի կարող լինել:

Աղոթեք որ բոլոր հոգիները կարողանան ժառանգել այդ Դրախտը: Աղոթեք այն հոգիների համար, որոնց համար անձնապես անհանգստացած եք: Աղոթեք բոլոր հոգիների համար:

Ձեր Հիսուս

Փրկիչ և Ազատարար ողջ մարդկության

Աղոթքի Խաչակրաց արշավանք (12) <<Աղոթք՝ խուսափելու համար հպարտության մեղքից>>

Շաբաթ, 3 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:40

Աղջիկս, Ես կարիք ունեմ բոլոր հավատացողների աղոթքներին, որպեսզի նրանք կարողանան փրկել չարերի հոգիները: Շատերն են այնքան հպարտությամբ լի Իմ ուսուցումների վերաբերյալ իրենց ինքնակոչ գիտելիքների պատճառով, որ նրանց խոնարհության պակասն Ինձ ցավ է պատճառում: Նրանք պետք է աղոթեն շնորհների

համար, որպեսզի կարողանան նորից փոքր դառնալ և վստահել Ինձ: Խնդրիր նրանց ասել այս աղոթքը.

<<Ո՜հ, Իմ Հիսուս, օգնիր ինձ խուսափել հպարտության մեղքից, երբ ես խոսում եմ Քո անվամբ: Ներիր ինձ, եթե ես երբևէ նվաստացրել եմ որևէ մեկին Քո սուրբ անվամբ: Օգնիր ինձ լսել, Հիսուս, երբ Քո ձայնը խոսում է, և լցրու Ինձ Քո Սուրբ Հոգով, որպեսզի ես կարողանամ զանազանել Քո խոսքի ճշմարտությունը, երբ Դու կոչ ես անում մարդկությամնը: Ամեն>>:

Մարգարեները նախապատրաստում են Իմ Երկրորդ Գալուստը

Շաբաթ, 3 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:45

Իմ սիրելի աղջիկ, մեծ վհատությամբ եմ Ես նայում Իմ այն հետևորդներին, ովքեր մերժում են Իմ ամենասուրբ խոսքը այս պատգամների միջոցով: Որքան է սա տխրեցնում Ինձ:

Ես խնդրում եմ Իմ զավակներն ամենուր, որ աղոթեն նրանց համար, ովքեր իրենց կյանքի մեջ մերժում են Աստծուն: Այնուամենայնիվ, Ես նաև կոչ եմ անում աղոթել Իմ այն հետևորդների համար, ովքեր անտեսում են կամ մոռացել են, որ Իմ Երկրորդ Գալուսը տեղի կունենա, և այն հնարավոր չէ կանգնեցնել: Սա մի կարևոր իրադարձություն է, և դուք բոլորդ պետք է նախապատրաստված լինեք դրա համար:

Մարգարեներ են ուղարկվել աշխարհ Իմ ծնունդն ավետելու համար: Մարգարեներ են ուղարկվել նաև Իմ Հոր կողմից հոգիներին փրկության համար նախապատրաստելու համար սկզբից ի վեր: Մարգարեներ են ուղարկվում հիմա աշխարհ՝ նախապատրաստելու համար մարդկանց Իմ Երկրորդ Գալստյան համար:

Արթնացեք, դուք բոլորդ, ովքեր ձևացնում եք, թե ճանաչում եք Ինձ: Եթե ճանաչում եք Ինձ, ապա ճանաչեք Իմ ձայնը, երբ Ես կոչ եմ անում ձեր սրտերին: Այնքան շատերն են մերժում ոչ միայն այս պատգամները, այլև՝ Ինձ:

Թող բոլոր նրանք, ովքեր այդքան արագորեն արհամարհում են Ինձ՝ մերժելով այս պատգամների միջոցով ողջ աշխարհին տրված Իմ աղերսանքները, հասկանան հետևյալը.

Ձեր մեջքը համառորեն շրջելով հիմա ձեզ տրվող Իմ խոսքի հանդեպ, դուք հիմա Ինձ մերժում եք այն աղոթքները, որոնց կարիքը Ես այս ժամանակ այնքան շատ ունեմ: Դուք, բոլորդ, ովքեր ձևացնում եք թե ճանաչում եք Ինձ, լսեք թե Ես ձեզ ինչ ունեմ ասելու:

Ձեր դաժանությունը խոցում է Իմ սիրտը: Ձեր առատաձեռնության պակասը նշանակում է, որ ձեր աղոթքները չեն առաջարկվում այնպես, ինչպես պետքն է՝ հոգիների փրկության համար:

Որտե՞ղ է ձեր խոնարհությունը և ինչու եք դուք կեղծ խոնարհությամբ քողարկում ձեր անբարյացակամությունը Իմ Սուրբ Խոսքի հանդեպ:

Դուք պետք է կանչեք Իմ Սուրբ Հոգուն, որ առաջնորդի ձեզ դեպի Ինձ, որպեսզի աշխատեք Ինձ համար ձեր սրտերում ամբողջական սիրով:

Երբեք մի պարծեցեք Սուրբ Գրքերի ձեր իմացությամբ: Երբեք մի օգտագործեք Իմ ուսուցումների գիտելիքը՝ ուրիշին նվաստացնելու համար: Երբեք մի զրպարտեք, մի մեղադրեք, վերևից մի նայեք ուրիշների վրա, ոչ էլ ծաղրեք նրանց Իմ անվամբ: Քանի որ երբ դուք դա անում եք, դուք Ինձ մեծապես վիրավորում եք:

Արթնացեք, զավակներս: Նախապատրաստեք ձեր հոգիները և առատաձեռն եղեք հոգով, քանի որ ժամանակը կարճ է հիմա:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Իմ Երկրորդ Գալստյան ժամանակը համարյա հասել է

Երկուշաբթի, 5 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա 03:15

Իմ սիրելի աղջիկ, Իմ Նախազգուշացման վերաբերյալ մարդկությանը նախապատրաստելու համար արվող նախապատրաստություններն ավարտված են:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Իմ թանկագին հետևորդներին, ովքեր Իմ հանդեպ ունեցած իրենց սիրո միջոցով օգնեցին փրկել այնքան շատ միլիոնավոր հոգիների:

Իմ Երկրորդ Գալստյան ժամանակը համարյա հասել է աշխարհի վրա: Այնուամենայնիվ այնքան շատերը դեռևս նախապատրաստված չեն դրա համար: Սակայն Իմ գթասրտությունը կպաշտպանի նրանց:

Իմ հայտնվելը կլինի մի փառահեղ իրադարձություն, և մարդիկ, կանայք ու երեխաները ծնկի կգան ուրախությամբ, զարմանքով և Իմ՝ իրենց Աստվածային Փրկչի հանդեպ սիրով իրենց սրտերի մեջ:

Շատերը մաքուր թեթևացում կզգան, քանի որ մարդը չի կարող դիմանալ այն տառապանքին, որը նրան պարտադրվում է Սատանայի ու նրա միլիոնավոր խավարի հրեշտակների կողմից, ովքեր թաքնված են աշխարհի բոլոր մասերում և սարսափելի ցավ են պատճառում:

Նրանք, Սատանայի դևերը, որոնց Իմ զավակներից այնքան շատերն են անտեսում այն պատճառով, որ չեն հավատում նրանց գոյությանը, հուսահատ դժբախտության պատճառ են դառնում աշխարհում:

Նրանք ատելություն են ստեղծում մարդկանց միջև, նախանձ, կասկածամտություն և սպանելու ցանկություն: Նրանց շատ ժամանակ չի մնացել, զավակներս, քանի որ Ես՝ ձեր Փրկիչը, շուտով կվերադառնամ, ինչպես խոստացվել է:

Աղոթեք բոլորդ՝ փրկելու համար բոլոր հոգիներին աշխարհում, որպեսզի նրանք նույնպես պատրաստ լինեն երկրի վրա Նոր Դրախտին:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կոչ չհավատացողներին, որ շրջվեն

Չորեքշաբթի, 7 դեկտեմբերի, 2011թ, առավոտյան ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, այսօր Ես ցանկանում եմ կոչ անել բոլոր չհավատացողներին և հավատի մեջ թույլերին: Հատկապես Ես կոչ եմ անում նրանց, ովքեր այնպես ընկղմված են նյութապաշտության ուղիների մեջ և նրանց, ովքեր ապրում են հարստությունների բոժոժի մեջ առանց իրենց հոգևոր բարեկեցության համար ժամանակ ունենալու:

Դուք, զավակներս, ամենաշատն եք Ինձ անհանգստացնում, քանի որ այնքան եք հեռացել Ինձնից: Սակայն Ես սիրում եմ ձեզ խորապես և հույս ունեմ, որ երբ Նախազգուշացումը տեղի ունենա, դուք անմիջապես կարձագանքեք Իմ կանչին:

Որքան եմ Ես տենչում, զավակներս, որ դուք ճանաչեք Ինձ և հասկանաք թե ինչպես են ձեր երկրային ունեցվածքները զրահի ծածկոց դրել, որը փակում է ձեզ ճշմարտության լույսից:

Ձեզ համար է, որ Իմ զոհաբերվող հոգիները կտառապեն ամենամեծ զոհողություններով:

Խնդրում եմ, բացեք ձեր մտքերը և եկեք դեպի Ինձ, որպեսզի Ես կարողանամ վերցնել ձեզ և բոլոր նրնաց, ովքեր մոտ են ձեզ, Ինձ հետ, և մարդկության մնացած մասին դեպի Նոր Դրախտ:

ՁԵր սիրող Հիսուս

Ազատարար և Փրկիչ ողջ մարդկության

Կույս Մարիամ. <<Ես զգացել եմ նույն տառապանքը>>

Հինգշաբթի, 8 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:10

Զավակս, երբ Ես ծնունդ տվեցի Հիսուս Քրիստոսին՝ ողջ մարդկության Փրկչին, Ես նման էի ցանկացած այլ մոր: Իմ սերն այդ երեխայի համար այնքան հորդուն էր, որ Ես ուրախության արցունքներով լաց եղա երբ առաջին անգամ տեսա Նրա գեղեցիկ դեմքը: Սակայն Ես գիտեի, որ դերը, որն ընդունել էի, հեշտ չէր լինելու, չնայած այդ ժամանակ չէի հասկանում, թե այդ ուղևորությունը որքան դժվար է լինելու:

Երբ Ես նայում էի Իմ փայփայած զավակի թանկագին դեմքին, Ինձ համար միայն մեկ ցանկություն կար՝ միշտ պաշտպանել նրան ամեն գնով:

Այն ժամանակ Իմ սիրտը միացած էր Իմ որդու սրտի հետ, ինչպես այսօր է: Այս նույն սիրտը տառապեց նրա հետ միության մեջ երկրի վրա Նրա կյանքի յուրաքանչյուր պահի:

Նրա զգացած յուրաքանչյուր ուրախություն Ես նույնպես կարողանում էի զգալ: **Նրա ծիծաղը Իմ դեմքին ժպիտ էր բերում:** Նրա վիշտը խորապես ցավ էր պատճառում Ինձ:

Խաչելության ընթացքում Նրա տառապանքը զգացվում էր Իմ մարմնի յուրաքանչյուր ոսկորի մեջ: Յուրաքանչյուր մեխ, որ խոցում էր Նրա մարմինը, խոցում էր իմը: Իր հետապնդողների կողմից նրան հասցված յուրաքանչյուր բռունցքի և ոտքի հարված Ես նույնպես զգում էի:

Ես զգում էի միևնույն տառապանքը, **չնայած Ես ներկա չէի Նրան հացված չարչարանքի մեծ մասի ժամանակ,** որը թաքնված էր Ինձնից և Նրա առաքյալներից:

Այսօր Ես տառապում եմ Իմ Որդու հետ ճիշտ ինչպես այն ժամանակ: Երբ այսօր Նրան ծաղրում են աշխարհում և ծաղր ու ծանակի ենթարկում հրապարակայնորեն, բեմի վրա և լրատվության մեջ, հատկապես աթեիստները, Ես դառն արցունքներ եմ հեղում:

Երբ Ես տեսնում եմ Իմ թանկագին Որդուն ողբալիս այն մեղքերի համար, որոնք Նա տեսնում է ամեն օր, Ես նույնպես ողբում եմ Նրա հետ: **Ես տեսնում եմ, զգում և ականատես լինում մարդկության համար Նրա շարունակական տառապանքը:**

Հիսուս Քրիստոսը՝ մարդկության Փրկիչը, տառապել է ձեզ բոլորիդ համար, սակայն ձեզ բոլորիդ շատ է սիրում:

Ես կանեմ ամենը ինչ կարող եմ՝ իրականացնելու համար Նրա ամենաթանկ ցանկությունը՝ փրկելու համար երկրի վրա գտնվող յուրաքանչյուր հոգու չարի ճանկերից:

Երբ այս առաքելությունը հաջողությամբ պսակվի, միայն և միայն այդ ժամանակ Ես կկարողանամ ուրախանալ վերջնական խաղաղության մեջ, երբ Իմ զավակները վերամիավորվեն որպես մեկ Նոր Դրախտի մեջ:

Աղոթիր, զավակս, որ բոլոր նրանք, ովքեր աղոթում են հոգիների փրկության համար, որ ոչ մի հոգի դուրս չմնա:

Գնա խաղաղությամբ և շարունակիր այս ամենակարևոր առաքելությունը Իմ սիրելի Որդու համար:

Ես միշտ կպաշտպանեմ քեզ:

Ձեր սիրող Մայր

Երկնքի Թագուհի

(Այս պատգամը ստացվել է պատարագից հետո և մի մասնավոր երևումից անմիջապես հետո Տիրամոր արձանի առջև, և տևեց 20 րոպե, որի ընթացքում Կույս Մարիամը լուրջ էր, իսկ նրա քողը ծածանվում էր:)

Փորձեր Եվրոպայում համաշխարհայինի արժույթ ներմուծելու համար

Ուրբաթ, 9 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 11:28

Իմ սիրելի աղջիկ, որքան եմ Ես ցանկանում որ Իմ զավակները, հատկապես նրանք ովքեր Եվրոպայում տառապում են ճնշումից, շրջվեն դեպի Իմ Հայրը օգնության համար:

Չար խումբը, որի մասին Ես ժամանակ առ ժամանակ խոսում եմ, **հիմա ավելի են մոտեցնում իրենց փորձերը՝ վերահսկելու համար Իմ բոլոր զավակներին աշխարհի այս մասում:**

Նրանք, ողջ Եվրոպան **վերահսկելու նպատակով համաշխարհային արժույթ ներմուծելու դաժան պլանի անմեղ զոհերը,** պետք է հիմա շատ աղոթեն որպեսզի Աստծուց՝ Ամենակարող Հորից օգնություն ստանան:

Երբեք տեղի չտաք, զավակներս, **այն հալածանքին, որը նյութվում է փակ դռների ետևում:** Աղոթեք՝ խուսափելու համար այդ հանգամանքներից: Կանչեք Հայր Աստծուն Իմ՝Նրա սիրելի որդի Հիսուսի Քրիստոսի անվամբ, որ խուսափեք այդ ճգնաժամից և ասեք.

Հայր Աստված, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, ես խնդրում եմ Քեզ կանգնեցնել Քո զավակներին վերահսկելու այդ պղծությունը: Խնդրում եմ

պաշտպանիր Քո բոլոր զավակներիին այս սարսափելի ժամանակներում որպեսզի մենք խաղաղություն գտնենք և արժանապատվորեն ապրենք մեր կյանքը՝ զերծ Չարից>>:

Աղջիկս, աղոթքը կարող է վերջ տալ և վերջ կտա այդ չարագուշակ ծրագրերին:

Աստված՝ Հավիտենական Հայրը, ինչպես Ես արդեն ասել եմ, կպատժի այդ չար պլանի համար պատասխանատուներին, եթե նրանք ետ չշրջվեն դեպի իրենց Ամենակարող Արարչի հանդեպ հավատին:

Վստահիր Ինձ: Վստահիր Իմ Հավիտենական Հորը և աղոթիր, որ այդ հալածանքը կանգնեցվի նախքան այդ հոգիներին ոչնչացնելու, վերահսկելու և վնասելու իսկական պլանը վերջնականապես կբացահայտվի:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Անցումը Նոր Դրախտ կլինի արագ և առանց տառապանքի

Կիրակի, 11 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժամը 12:45

Ես գալիս եմ այսօր քեզ մոտ Իմ Սուրբ Սրտի մեջ մեծ ուրախությամբ, որպես քո ամուսին: Դու, ազջիկս, ընդունել ես այս ամենասուրբ խնդրանքը՝ միանալու Ինձ հոգիներ փրկելու համար:

Քո խոնարհ ենթարկվածության միջոցով հիմա քեզնից շատ բան է ակնկալվում: **Վախը կոչնչացվի մինչ դու առաջ կշարժվես,** որպես արդյունք Իմ հատուկ ժառանգության, նվիրաբերելու քո կյանքը Իմ բոցավառ ցանկությանը՝ փրկելու մարդկությանը դժոխքի խորքերից:

Քո աշխատանքը՝ ուղղորդվելով Իմ Աստվածային ձեռքի միջոցով, հիմա ամբողջապես սրբազան է և ազատ Չարի կողմից ցանկացած տեսակի միջամտությունից:

Այլևս քեզ կասկածներ չեն հալածի: Սակայն իմացիր այս: **Քեզ տրվող Իմ խոսքը կոտնահարվի և պատառ-պատառ կարվի:** Յուրաքանչյուր **փորձ կարվի հիմա՝ արատավորելու այս Սուրբ պատգամները նրանց կողմից, ովքեր ձևացնում են թե ճանաչում են Ինձ:**

Քո տառապանքը այժմվանից սկսած քո կողմից կընդունվի սրտիդ մեջ ամբողջական ենթարկվածությամբ և ուրախությամբ: Սուրբ Հոգու միջոցով Իմ կողմից քեզ տրված ուժը կվախեցնի քեզ: Դու կբարձրանաս սրտի ամաբողջական համոզվածությամբ և

հանդարտ, սակայն վճռական վստահությամբ, որ տարածես Իմ խոսքը ամբողջ աշխարհում:

Ոչ մեկը չի կանգնեցնի և չի կարող կանգնեցնել քեզ այս աշխատանքում: Ոչ մեկը չի կարող արգելել քեզ Երկնքից եկող այս ամենաուրբ կանչից:

Դու, աղջիկս, պատրաստ ես դառնալ փրկապարան ամայության մեջ քշված հոգիների համար: Նրանք կարձագանքեն այս պատգամների կանչին, անկախ նրանից, թե որքան կարծրացած են նրանց սրտերը: Շատերը չեն իմանա, թե ինչու է դա տեղի ունենում իրենց հետ: Դա կլինի Սուրբ Հոգու զորությամբ, որը սիրո և ուրախության բոց կվառի նրանց հոգիների մեջ, որը նրանց կբերի դեպի Ինձ՝ **Իմ զավակներին Իմ սուրբ բազուկների մեջ բերելու Իմ հրատապ աղերսների միջոցով:**

Շնորհակալ եմ քեզնից, որ արձագանքեցիր այս հատուկ խնդրանքին՝ **դառնալու Իմ ամուսինը Ինձ հետ վերջնական միությամբ:** Այս պայմանագիրը, երբ դու Ինձ ես հանձնում քո հոգին ամբողջապես, Ինձ կտա այն ազատությունը, որի կարիքը Ես ունեմ հաջողությամբ ավարտելու այս առաքելությունը, որի համար դու ընտրվել ես:

Գնա հիմա, Իմ թանկագին աղջիկ, և օգնիր Ինձ իրականացնել մարդկությանը տրված Իմ խոստումը: **Իմ վերադարձը կլինի, որպեսզի ետ պահանջեմ Իմ թանկագին զավակներին և տանեմ նրանց դեպի Խաղաղության Նոր Դարաշրջանը:** Այս անցումը դեպի Նոր Դրախտ կլինի արագ և առանց տառապանքի՝ Ինձ տրված քո ընծայի պատճառով:

Ասա Իմ զավակներին **որ Իմ սիրտը ուռչում է ուրախությունից այս ժամանակ, երբ Իմ ծնունդը տոնելու ժամանակը մոտենում է:**

Ես սիրում եմ ձեզ: Ձեր սիրող Փրկիչ և Ազատարար

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Անվարակելիության (իմունիտետ) խոստում նրանց համար, ովքեր մերժում են Հիսուսին

Կիրակի, 11 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:30

Իմ թանկագին աղջիկ, շնորհակալ եմ որ պատասխանում ես Երկնային թագավորությունից եկող այս կանչին, երբ Ես խնդրեցի քեզ ընդունել Իմ թանկագին Որդի Հիսուս Քրիստոսի հետ առեղծվածային միությունը:

Ես ներկա եմ Իմ Որդի Հիսուսի մեջ, ինչպես Նա է ներկա Իմ մեջ՝ միավորված Սուրբ Հոգու սիրով: Քո հոգին, հետևաբար, հյուսված է Իմի հետ, և ամեն ինչ շատ ավելի պարզ կդառնա քեզ համար:

Զավակս, դու ձուլվում ես դառնալու համար մի արարած, որը Ես այնքան ցանկանում եմ, որպեսզի դու ամբողջապես արժանի լինես այս առաքելությաո համար: Քեզ տրվեցին աստվածային միջամտության արցունքներ, որպեսզի դու կարողանաս ակնթարթորեն ճանաչել այս նոր անսպանելի կանչը: Հիմա, երբ արդեն արցունքներդ հեղել ես, այլևս լաց մի լինի, քանի որ այժմվանից սկսած քո հոգում միայն երջանկություն կթագավորի::

Աղջիկս, Ինձ տխրեցնում է որ **աշխարհում այլևս ոչ մեկը չի ճանաչում Ինձ: Շատերն են ամբողջությամբ մոռացել Ինձ: Ես ոչինչ չեմ նշանակում Իմ այնքան շատ զավակների համար:**

Դու պետք է օգնես Ինձ, աղջիկս, երբ Ես ցուցադրեմ Իմ ներկայությունը, որպեսզի Ես ճանաչվեմ աղոթքի միջոցով:

Խնդրում եմ աղոթիր, որ ողջ մարդկությունն ընդունի նոր կյանքի ընծան, որը հիմա կտրվի նրանց Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով:

Ոչ մեկը ճշմարտապես չի հասկանում Իմ մտահոգությունն այն հոգիների համար, ովքեր մերժում են Ինձ կամ Փրկչի գոյությունը, որին Ես աշխար ուղարկեցի:

Այդ խեղճ հոգիները՝ այնպես լի տրամաբանական բացատրություններով՝մեծամտորեն անտեսում են Իմ գոյությունը, Ինձ համար կորած են այս պահին: Նրանց միակ փրկությունը (քանի որ շատերը կմերժեն Աստվածային Գթասրտության առաջարկը Նախազգուշացման ժամանակ) կլինի այն զավակների աղոթքի միջոցով, ովքեր սիրում են Հորը:

Այնքան շատերը, **ովքեր չեն ընդունում Ինձ, դեռևս շատ քիչ գիտեն Իմ մասին:** Ես Հայրական Սիրո Աստված եմ, Երկնավոր Հայր, ով հոգ է տանում Իր յուրաքանչյուր զավակի համար. Ուժեղների, թույլերի, հիվանդների, բարիների ու չարերի համար: Ոչ մեկը դուրս չի թողնվում Իմ անհուն սիրուց, անկախ նրանից, թե որքան սև են նրանց հոգիները:

Ես կոչ եմ անում ձեզ, զավակներս, աղոթել Ինձ Իմ Որդու անունով՝ մարդկության բոլոր մեղքերի քավության համար:

Իմ Որդին կպարուրի ողջ մարդկությունը հիմա, և երբ Գիտակցության Լուսավորումն անցնի, ձեր աղոթքները ճշմարտապես պետք են այդ էտապում: Ձեր աղոթքները, զավակներս, կօգնեն փրկել այն մարդկանց, ովքեր կշարունակեն արհամարհական ձևով մերժել այն գթասրտությունը, որն Իմ Որդին ցույց կտա նրանց:

Իմ հանդիսավոր խոստումն է, զավակներս, որ ձեզնից ով էլ որ կանչի Ինձ Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի անվամբ՝ փրկելու համար ձեր եղբայրներին ու քույրերին, որ նրանց անմիջապես կտրվի անվարակելիություն: Յուրահատուկ շնորհներ կտրվեն ձեզնից յուրաքանչյուրին, ովքեր կխոստանան մեկ ամիս աղոթել նրանց հոգիներրի համար: Ահա թե Ես ինչ եմ խնդրում ձեզ ասել. (Աղոթքի խաչակրաց արշավանք 13)

<<Ոհ, Երկնավոր Հայր, Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի սիրո միջոցով, ում տառապանքը խաչի վրա փրկեց մեզ մեղքից,

Խնդրում եմ փրկիր բոլոր նրանց, ովքեր դեռևս մերժում են Նրա Գթասրտության ձեռքը:

Հեղեղիր նրանց հոգիները, սիրելի Հայր, Քո սիրո խորհրդանիշով:

Ես աղերսում եմ Քեզ, Երկնավոր Հայր, լսիր իմ աղոթքը և փրկիր այդ հոգիներին հավիտենական դատապարտումից: Քո գթաասրտությամբ թույլ տուր նրանց առաջինը մտնել Երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջան: Ամեն>>:

Ձեր Երկնավոր Հայր

Ամենաբարձրյալ Աստված

Հոգևոր նախանձը սարսափելի բան է

Երկուշաբթի, 12 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:00

Իմ թանկագին աղջիկ, հոգևոր նախանձը սարսափելի բան է, և վշտացնում է Իմ տեսանողներից շատերին:

Այն նաև վշտացնում է Իմ այն հետևորդներին, ովքեր մեկուսացված են զգում և ինչ-որ տեղ **հիասթափված, երբ Ես ընտրում եմ որոշակի հոգիների, որ օգնեն Ինձ մարդկությանը փրկել:** Դրա փոխարեն նրանք պետք է իմանան, որ Ես հավասարապես սիրում եմ բոլորին:

Որքան է Իմ սիրտը կոտրվում, երբ ընտրյալ հոգիները հատկապես, իրենց սպառնալիքի տակ են զգում ուրիշ ընտրյալ հոգիների կողմից:

Յուրաքանչյուր հոգու, որ Ես ընտրում եմ, տրվում է տարբեր առաջադրանք, և նրանց խնդրվում է հետևել տարբեր ուղիների: Ընդհանուր հայտարարը միշտ նույնն է: Ես ցանկանում եմ, որ Իմ բոլոր տեսանողները և մարգարեները ձեռնարկել հոգիներ փրկելու սրբազան առաջադրանքը:

Ես օգտագործում եմ տարբեր հոգիների, սրտով խոնարհ, որ հասնեմ Իմ նպատակներին:

Սատանան միշտ կփրձի շրջել Իմ ընտրյալ հոգիների սրտերը՝ խայթելով նրանց: **Նա գիտի, թե ինչպես դիպչի նրանց հոգիներում չմշակված նյարդին՝ ասելով նրանց, որ այլ ընտրյալ հոգիներ ավելի կարևոր են, քան իրենք:**

Դրանից հետո նա ստեղծում է վիրավորանքի զգացողություն նրանց սրտերի մեջ և նախանձ: Սա նշանակում է, որ միմյանց սիրելու և շնորհի վիճակի մեջ մնալ

շարունակելու փոխարեն, նրանք գայթակղության մեջ են ընկնում միմյանց վերևից նայելու: Շատ դեպքերում նրանք անմիջապես հեռանում են միմյանցից և թույլ են տալիս, որ նախանձի մեղքը նվաճի իրենց հոգիները::

Իմ հետևորդներից այնքան շաատերը ոչ միայն չեն սիրում Իմ տեսանողներին, նրանք կարող են վերաբերվել նրանց հետ արհամարհանքով: **Ճիշտ այն ձևով, ինչպես Ինձ հետ վարվում էին իրենց կարծիքով արդարամիտ փարիսեցիները:**

Երկրի վրա Իմ գտնվելու ժամանակ նրանք փորձում և փորձում էին յուրաքանչյուր բառ, որը գալիս էր Իմ շրթունքներից: Ամեն տեսակ խորամանկ մարտահրավեր էր ներկայացվում Ինձ, որպեսզի կարողանային ապացուցել , թե Ես ստախոս եմ: Ուստի այդ կերպ կվարվեն նաև Իմ ժամանակակից տեսանողների և մարգարեների հետ:

Սատանան տանջում է Իմ այդ հետևորդներին կասկածներ սերմանելով նրանց մտքերի մեջ Իմ պատգամատարների մասին, որովհետև նա ցանկանում է վարկաբեկել Իմ սուրբ խոսքը: Սա է նրա նպատակը:

Աղոթեք սրտանց, որ ձեզանից յուրաքանչյուրին տրվեն շնորհները՝ հարգելու Իմ խոսքը Իմ թանկագին տեսանողների գրչի միջոցով:

Տեսանողները երբեք չեն ընկնում հոգևոր նախանձին տեղիք տալու թակարդը: Դա անվայելուչ է և խոցում է Իմ սիրտը սրի պես:

Սիրեք միմյանց:

Հարգանք և պատիվ ցույց տվեք միմյանց Իմ անվամբ:

Սա է ամենակարևոր դասը:

Եթե ձեզ համար դժվար է դա անել, ապա մնացած բոլոր գործերն Ինձ համար անտեղի են:

Ձեր ուսուցիչ և փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ես չեմ կարող չմտածել այն հոգիների մասին, որոնց Սատանան քաշում է դժոխք

Երեքշաբթի, 13 դեկտեբերի, 2011թ, երեկոյան 08:15

Իմ սիրելի աղջիկ, նախապատրաստությունները կարոր են Իմ բոլոր հետևորդների համար, մինչ Նախազգուշացումը մոտենում է:

Բոլոր հավատացողները **պետք է սրտանց աղոթեն իրենց մեղքերի թողության համար, որպեսզի խուսափեն քավարանի ցավերից, որոնք մարդկանց մեծ մասը կզգան աշխարհում Նախազգուշացումից անմիջապես հետո կարճ ժամանակով:**

Աղոթեք, աղոթեք բոլոր նրանց համար, ովքեր կվնասվեն (տրավմա կստանան), երբ տեսնեն իրենց հոգիների վիճակը, երբ իրենց մեղքերը բացահայտվեն իրենց Նախազգուշացման ընթացքում:

Նրանք պետք է հասկանան, որ իրենց մեղքերը պետք է բացահայտվեն իրենց նախքան կկարողանան մաքրվել ամբողջ մեղքից, **որպեսզի կարողանան մտնել Երկրի վրա Իմ Նոր Դրախտը՝** Խաղաղության, Սիրո և Երջանկության Նոր Դարաշրջանը, որն Իմ զավակներից յուրաքանչյուրը պետք է ժառանգի:

Իմ իրտը լի է ուրախությամբ, որովհետև Ես բերում եմ այս մեծ ընծան մարդկությանը: Սակայն Իմ տխրությունը մնում է նրանց պատճառով, ովքեր պարզապես կմերժեն այս նոր կյանքի հնարավորությունը:

Ես այնքան շատ աղոթքների կարիք ունեմ, զավակներս, որպեսզի Սատանային կանգնեցնենք նրանց հոգիները գողանալուց: Նա կշարունակի դա անել մինչև վերջին պահը:

Ես չեմ կարող չմտածել այն հոգիների մասին, որվքեր կհեռացվեն Ինձնից՝ բողոքելով բղավելով և ոտքերով հարվածելով, մինչ Սատանան իր զինակիցների հետ քարշ կտա նրանց դեպի դժոխքի խորքերը:

Օգնեք Ինձ, զավակներս, արգելել դա ձեր աղոթքների միջոցով:

Զավակներս, այդ հոգիները պետք է լիովին մերժեն Սատանային և նրա ուղիները, եթե նրանք մտնելու են Նոր Դրախտ: Նրանք պետք է կամ կամովին շրջվեն դեպի Ինձ, կամ էլ ընդհանրապես չշրջվեն:

Նրանք երկու ընտրություն ունեն, Երկրի վրա Նոր Դրախտը, կամ էլ հավիտենական դատապարտման խորքերը՝ Սատանայի ընկերակցությամբ:

Երբեք մի կասկածեք դժոխքի գոյությանը, զավակներս: Իմացեք, որ յուրաքանչյուր սևացած հոգի, մահվան պահին, քարշ է տրվում Սատանայի դևերի կողմից դեպի Դժոխք և տանքանքի ենթարկվում հավիտյան: Իր յուրաքանչյուր խոստման համար Սատանան ստեղծել է տառապանքի սոսկալի վիճակ այսպիսի հոգիների համար: Մարդկության հանդեպ նրա տածած ատելության պատճառով այդ հոգիները կտառապեն իրենց կարողությունից ավելի: Սակայն կրել այդ տառապանքները նրանք պարտավոր են ողջ հավիտենության համար:

Մի՞թե այդ հոգիները չգիտեն, թե Սատայի խոստումներն ինչ են տալիս:

Մի՞թե նրանք չգիտեն, որ հարստությունը, հռչակն ու գայթակղիչ նյութականությունը կստեղծեն մի հստակ ուղի ճիշտ դեպի Չարի բազուկները:

Արթնացեք բոլորդ, քանի դեռ կարող եք: **Փրկեք ձեզ և այդ խեղճ սխալ ուղղորդված մեղավորներին դեպի ձեր գոյությունը տանող այդ սոսկալի վախճանից:**

Ձեզ շատ ժամանակ չի մնացել:

Թող այդ հոգիների համար աղոթքը սկսվի այսօր:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Երկրորդ Գալուստը տեղի կունենա շուտ Նախազգուշացումից հետո

Չորեքշաբթի, 14 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:15

Իմ թանկագին աղջիկ, դու պետք է միշտ վստահես Ինձ և իմանաս, որ քեզ տրված ոչ մի պատգամ երբեք չի թունավորվի:

Դու վերջապես իմ Ամենասուրբ Սրտի մեջ ես պահվում, և քո ձեռքն ուղղորդվում է Իմ Ձեռքի կողմից:

Դու կարող ես գրել և կգրես միայն քեզ տրված Իմ սուրբ խոսքը, որպեսզի տարածես Իմ պատգամները ողջ մարդկության համար:

Դու չպետք է փորձես գտնել Նախազգուշացման օրը: Ես չեմ կարող բացահայտել այդ ամսաթիվը, քանի որ դա Իմ Հավիտենական Հոր կամքով չէ: Նախազգուշացումը տեղի կունենա բոլորովին անսպասելի և այն ժամանակ, երբ մարդիկ չեն մտածի այդ մասին:

Ժամանակը չափազանց կարճ է, ուստի որքան հնարավոր է շատ ժամանակ անցկացրեք սրտանց աղոթելու համար՝ հոգիներ փրկելու: Բոլոր հոգիներին:

Երկնային պատիժը ետ է պահվել, և տեղի կունենա միայն այն դեպքում, եթե Նախազգուշացումից հետո մարդիկ չապաշխարեն և բազմություններով ետ չկանգնեն իրենց չար ուղիներից:

Իմ Հայրը թույլ է տվել ազդարարել Իմ Երկրորդ Գալուստը երկրի վրա չափազանց կարճ ժամանակի ընթացքում: Այն տեղի կունենա Նախազգուշացումից քիչ ժամանակ անց: Բոլոր հոգիները պետք է ամբողջապես նախապատրաստված լինեն:

Հոգիներ փրկելու համար հաջորդ խաչակրաց արշավանքը հետևյալն է. (Աղոթքի խաչակրաց արշավանք 14)

Ոհ, Ամենակարող Հայր, Ամենաբարձրյալ Աստված,

Խնդրում եմ զթա բոլոր մեղավորներին

Բաց նրանց սրտերը, որ ընդունեն փրկություն և ստանան լի շնորհներ:

Լսիր իմ աղերսները իմ սեփական ընտանիքի համար և վստահեցրու, որ նրանցից յուրաքանչյուրը բարեհաճություն կգտնի Քո սիրող սրտում:

Ոհ Աստվածային Երկնավոր Հայր, պաշտպանիր քո բոլոր զավակներին երկրի վրա ցանկացած միջուկային պատերազմից կամ այլ գործողություններից, որոնք պլանավորվում են՝ ոչնչացնելու համար Քո զավակներին:

Պահիր մեզ բոլոր վնասից և պաշտպանիր մեզ:

Լուսավորիր մեզ, որ կարողանանք բացել մեր աչքերը՝ լսելու և ընդունելու համար մեր փրկության ճշմարտությունը առանց որևէ վախի մեր հոգիների մեջ:

Գնա խաղաղությամբ: Ձեր Սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Իմ զավակները մերկացվել են մաքրագործման այս տարում

Հինգշաբթի, 15 դեկտեմբերի, 2011թ,երեկոյան ժ 08:55

Իմ թանկագին աղջիկ, մաքրագործման տարին համարյա ավարտվել է, և դրա արդյունքում Իմ զավակներն ամենուր նախապատրաստվել են Նախազգուշացմանը:

Շատերն **Իմ զավակներից սոսկալի տառապեցին 2011թ. ընթացքում:** Պատերազմներ, բռնություն, սպանություն և ատելություն, որն ամբողջապես մտածված էր Սատանայի կողմից, որի բանակը խեղեց ու սպանեց Իմ այդ թանկագին հոգիներին: Այդ չար ուժերը մի սոսկալի պատժով կտառապեսն, եթե չապաշխարեն Նախազգուշացամն տեղի ունենալուց հետո:

Շատերն **Իմ զավակներից մերկացվեցին իրենց նյութական հարմարավետությունից** և դժվարություններ կրեցին, որոնք նախկինում ստիպված չէին եղել կրել:

Այդ փորձությունները ստեղծվել և պարտադրվել էին մարդկությանը Սատանայի կողմից, սակայն դրանք թույլ տրվեցին Իմ կողմից հոգիների մաքրագործման համար: Աղջիկս, կմտածես, թե դա դաժան է, սակայն անհրաժեշտ էր մարդկությանը նախապատրաստել և նրանց հոգիների մեջ խոնարհություն հաստատել:

Հիմա, ավելի մաքուր Իմ աչքում, նրանց սրտերը բացվել են ընդունելու համար իրենց հավիտենական կյանքի մասին ճշմարտությունը: Սա նշանակում է, որ **Նախազգուշացման ընթացքում ավելի քչերը կտառապեն,** քանի որ նրնաք անցել են այդ մաքրագործումը:

Իմ զավակները հիմա պատրաստ են ստանալու Իմ Գթասրտության ընծան: Ժամանակը գրեթե հասել է աշխարհի վրա: Համբերող եղիր, աղջիկս: Երբեք չսպասես, որ Ես աշխարհին ամսաթիվ կտամ, քանի որ դա ձեր գիտության համար չէ, ինչպես Ես քեզ շատ անգամ ասել եմ նախկինում:

Ամբողջապես վստահիր Ինձ և դու խաղաղության մեջ կլինես:

Ես կբերեմ Իմ Նախազգուշացման ընծան երբ ժամանակը գա և երբ Իմ զավակներն ամենաքիչն են սպասում դա:

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Ազատարար

Կույս Մարիամ. <<Վերջին ժամանակների մարգարեն առաջնորդություն է ստանում Երկնքից>>

Ուրբաթ, 16 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 10:35

Զավակս, Ես գալիս եմ քեզ մոտ բերելու համար սրտի հանգստություն: Դու, Իմ ուժեղ զավակ, այժմվանից սկսած ի վիճակի կլինես կրելու տառապառնք այնպիսի չափով, որ կողջունես դա և հետևաբար, կապացուցես քո դիմացկունությունը, մինչ կմարտնչես **հոչակելու համար Իմ Որդի Հիսուս Քրիստոսի խոսքը:**

Դու, զավակս, մասնատված ես: Յուրաքանչյուր օր բերում է նոր և ավելի շատ մարտահրավերներ այս աշխատանքում, որոնցից շատերը դժվար են:

Հիմա է ժամանակը **առանց վախի վերցնելու քո սպառազինությունը:** Առաջ գնա և մարտնչիր Իմ որդու համար, վստահանալու, որ **Նրա սուրբ խոսքը լսվի արագորեն** աշխարհով մեկ: Որքան կարող ես արագ: Մի ուշացրու: Թույլ մի տուր ուշադրության շեղումներ:

Ես սիրում եմ քեզ, զավակս: Դու ամբողջապես պաշտպանված ես վնասվելուց: Նկատու՞մ ես, թե որքան քիչ է քեզ վրա ազդում, երբ ուրիշները հարձակվում են քեզ վրա այս աշխատանքի համար: Սա սպառազինության շնորհն է:

Կռվիր մարտը Սատանայի դեմ քո մարտիկների բանակի հետ և օգնիր փրկել ողջ մարդկությանը:

Դու ճշմարիտ **մարգարեն ես վերջին ժամանակների**, որին առաջնորդում է Երկինքը, օգնելու համար աշխարհին դարձի բերել: Օգնությունը կուղարկվի արագորեն: Ուրախացիր, քանի որ սա մեծ ընծա է:

Քո յուրաքանչյուր կատարած քայլին ուղղություն է տրվում, ուստի պարզապես վստահիր Հիսուսին և ենթարկվիր Իմ Երկնավոր Հորը միշտ:

Քաջ եղիր, խիզախ և առաջ գնա առանց վախի քո հոգու մեջ:

Ձեր Երկնավոր Մայր

Հրեշտակների Թագուհի

Կույս Մարիամ. <<Հույսը երբեք չպետք է տեղը զիջի վախին>>

Շաբաթ, 17 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:30

Զավակս, աշխարհին պետք է արագորեն հայտնել այն սիրո և գթասրտության մասին, որն Իմ Որդի Հիսուս Քրիստոսն ունի երկրի վրա գտնվող յուրաքանչյուր մարդու հանդեպ:

Նա սիրում է յուրաքանչյուրին, ներառյալ գաղջ հոգիներին, և նրանց, ովքեր չեն ճանաչում Իրեն:

Երբեք չկասկածես, որ այդ մարդիկ, ովքեր հոգու պակաս ունեն, շատ են սիրված Նրա կողմից: Նրանց մեծ հույս կտրվի, երբ Իմ Որդու գթասրտությունը պարուրի նրանց:

Երկինքը կուրախանա, երբ այդ մարդիկ բացեն իրենց աչքերը ճշմարտության հանդեպ Նախազգուշացման ընթացքում: Այդ ժամանակ է, որ նրաք կընդունեն այն սերը և հույսը, որը կտրվի նրանց: Դա կլինի ամենամեծ նվերը երբևէ ստացված այս երկրի վրա:

Զավակս, մարդիկ **երբեք չպետք է արհամարհեն նրանց, ովքեր չեն պատվում Իմ Հորը:** Նրանք երբեք չպետք է հույսը կորցնեն նրանց համար, ովքեր մերժում են Իմ Որդուն: Այս հոգիները բոլորն էլ սիրված են մի խորը քնաքշությամբ Իմ Որդու կողմից, ով միայն ցանկանում է փրկել նրանց:

Հույսը, զավակս, տրվում է Հայր Աստծո կողմից: **Այն երբեք չպետք է իր տեղը զիջի վախին կամ բացասականությանը:** Իմ որդու գթասրտությունը սահմաններ չի ճանաչում: Շուտով այն կտրվի ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ:

Հույսը և ուրախությունը պետք է առաջնային լինեն ձեր մտքերի մեջ, զավակներս, որովհետև Իմ Որդին պատրաստվում է հեղել այնպիսի մեծ ընծա Իր զավակների վրա, որպեսզի փրկի աշխարհը:

Նա ցանկանում է, որ ողջ մարդկությունը լինի խաղաղության այդ փառահեղ դարաշրջանի մասը, որը սպասում է ձեզ բոլորիդ:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ բոլորի հոգիները երկրի վրա ողջունեն այս սիրող ընծան բացված և խոնարհ սրտերով:

Նախազգուշացման միջոցով է, որ Աստծո Գթասրտությունը վերջնականապես ցույց կտրվի մարդկությանը:

Դրանից հետո ոչ մի կասկած չի լինի, թե որքան շատ է Նա սիրում և փայփայում Իր բոլոր զավակներին:

Ձեր սիրող Մայր

Երկնքի Թագուհի

Աղոթեք, ինչպես երբեք չեք աղոթել

Կիրակի, 18 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:10

Իմ սիրելի աղջիկ, այն մարդիկ, ովքեր այնքան հեռացած են Ինձնից, նրանք Իմ ամենամեծ մտահոգությունն են:

Իմ հետևորդների կողմից պետք է արվի ամեն ջանք, տարածելու համար Իմ կողմից ձեզ տրված աղոթքն ուղղված Իմ Հավիտենական Հորը, որը խնդրում է անվարակելիություն նրանց հոգիների համար (խաչակրաց աղոթք 13)

<<Ոհ, Երկնավոր Հայր, Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի սիրո միջոցով, ում տառապանքը խաչի վրա փրկեց մեզ մեղքից,

Խնդրում եմ փրկիր բոլոր նրանց, ովքեր դեռևս մերժում են Նրա Գթասրտության ձեռքը:

Հեղեղիր նրանց հոգիները, սիրելի Հայր, Քո սիրո խորհրդանիշով:

Ես աղերսում եմ Քեզ, Երկնավոր Հայր, լսիր իմ աղոթքը և փրկիր այդ հոգիներին հավիտենական դատապարտումից: Քո գթասրտությամբ թույլ տուր նրանց առաջինը մտնել Երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջան: Ամեն>>:

Ես կոչ եմ անում բոլոր հավատացողներին, ովքեր կարդում են այս պատգամները տրված աշխարհին, որ աղոթեն ինչպես երբեք չեն աղոթել:

Ես ձեր նվիրվածության կարիքն ունեմ, վստահանալու համար, որ Իմ բոլոր զավակներն ընդունեն Իմ ընծան սիրով և ուրախությամբ իրենց սրտերի մեջ:

Նրանք չպետք է վախենան, քանի որ Ես գալիս եմ Սիրո և Գթասրտության ընծայով:

Ձեր Հիսուս

Աղոթքի Խաչակրաց արշավանք (15) <<Շնորհակալություն Աստվածային Գթասրտության ընծայի համար>>

Երկուշաբթի, 19 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:30

Իմ թանկագին աղջիկ, որքան եմ Ես ցանկանում , որ քրիստոնյաներն ամենուր պատվեն Իմ ծնունդը իրենց սրտի խորքից:

Ես ջերմորեն ցանկանում եմ, որ ողջ մարդկությունը թույլ տա Իմ Սուրբ Հոգուն ներթափանցել իրենց սրտերի և հոգիների մեջ այս ժամանակ:

Իմ ծնունդը պետք է պատվել որպես այնպիսին, ինչ նա ներկայացնում է՝ երբ այն նշում են: Հիշեք, որ դուք պատվում եք Փրկության Իմ ընծան:

Ահա թե ինչու Ես ուղարկվեցի Իմ Հոր կողմից առաջին անգամ:

Ահա թե ինչու Ես կվերադառնամ նորից, որ մարդկությանն առաջարկեմ փրկության մի երկրորդ հնարավորություն:

Ես ցանկանում եմ, որ Իմ զավակներն առաջարկեն աղոթքի այս հաջորդ խաչակրաց արշավանքը այս Սուրբ Ծննդի ժամանակ:

Ոհ, Երկնավոր Հայր

ՄԵնք պատվում ենք Քեզ այն զոհաբերության խորը գնահատմամբ, որը դու կատարեցիր երբ աշխարհ ուղարկեցիր Փրկչի,

Մենք առաջարկում ենք Քեզ ուրախությամբ և եախտագիոտությամբ մեր աղոթքները՝ խոնարհ շնորհակալությամբ,

Այն ընծայի համար որը Դու հիմա տալիս ես Քո զավակներին՝ Աստվածային Գթասրտության Ընծայի համար,

Աղոթիր մեզ համար, Ամենաբարձրյալ Աստված, որպեսզի մենք արժանի լինենք և ընդունենք այդ Մեծ Գթասրտությունը երախտագիտությամբ: Ամեն

Ձեր Սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Այն մեղավորները, ովքեր շրջվում են դեպի Ինձ, անմիջապես շնորհ են գտնում

Երեքշաբթի, 20 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:30

Իմ ամիրելի աղջիկ, ինչու՞ են Իմ զավակներն իրենց այդպես լքված զգում աշխարհում հիմա:

Ինչու՞ են նրանք հուսահատվում վշտից և միայնությունից, երբ **իրենք պետք է միայն կանչեն Ինձ՝ իրենց Հիսուսին, որ իրենց սփոփանք տամ:**

Նրանցից յուրաքանչյուրը պետք է շրջվի և Ինձնից օգնություն խնդրի: Ես կպատասխանեմ յուրաքանչյուր և ամեն աղոթքի: Ոչ մի խնդրանք անուշադրության չի մատնվի, և նրանց աղոթքներին պատասխան կտրվի Իմ Սուրբ Կամքին համաձայն:

Այնքան շատերն են մոռանում, որ երբ իրենք շրջվում են դեպի Ինձ, Ես մշտապես իրենց կողքին եմ:

Յուրաքանչյուր հոգի երկրի վրա գտնվող թանկ է Ինձ համար:

Եթե նրանք միայն հասկանային, որ Ինձ մեծ ուրախություն է պատճառում, երբ իրենք շրջվում են դեպի Ինձ օգնության համար:

Ինձ նույնիսկ **ավելի շատ ուրախություն և երջանկություն է պատճառում, երբ մեղավորները խնդրում են Ինձ, որ ներեմ իրենց** և ցավեմ նրանց մեղքերի համար:

Սրանք այն հոգիներն են, ովքեր անմիջապես շնորհ են գտնում: Ասա նրանց, որ իրենք երբեք չպետք է վախենան շրջվել դեպի Ինձ, քանի որ Ես միշտ գթասիրտ եմ: Թեթևացումը, որ նրանք կզգան դրանից հետո, շնորհ է, որը Ես հեղում եմ նրանց վրա, ովքեր ունեն ջերմ անկեղծ սիրտ:

Սա տարվա այն ժամանակն է, երբ Իմ գթասրտությունն ամենից շատ է դուրս հեղվում ողջ աշխարհի վրա: Ուստի դարձեք դեպի Ինձ հիմա այն զորության և շնորհների համար, որոնք անհրաժեշտ են օգնելու ձեզ, որ դիմանաք ձեր փորձություններին աշխարհում:

Ձեր Հիսուս

Մարդկության Փրկիչ և Ազատարար

Նույնիսկ սպանության մեղքը կարող է ներվել

Չորեքշաբթի, 21 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:10

Իմ սիրելի աղջիկ, այդ Ես եմ:

Այս երեկո, **Ես գալիս եմ սփոփանք առաջարկելու այն մեղավորներին, ովքեր հավատացած են, թե իրենք արժանի չեն Իմ առջև կանգնելու:**

Ես կանչում եմ ձեզ, խեղճ տառապած **հոգիներ, որ հավատացած եք, թե ձեր մեղքերն այնքան նողկալի են, որ Ես չեմ կարող ներել ձեզ: Որքան սխալ եք դուք:**

Մի՞թե չգիտեք, որ չկա ոչ մի մեղք, որը Ես չկարողանամ ներել: Ինչու՞ Եք այդքան վախեցած:

Մի՞թե չգիտեք, որ **նույնիսկ սպանության ամենածանր մեղքը կարող է ներվել:** Բոլոր մեղքերը կարող են ներվել և կներվեն, եթե ճշմարիտ սրտանց ապաշխարություն է ցույց տրվում:

Ես սպասում եմ: Բացեք ձեր սրտերը Ինձ համար: Վստահեք Ինձ: **Ես ձեր միակ ամենաճշմարիտ ընկերն եմ** այն առումով, որ դուք կարող եք Ինձ ասել ամեն ինչ, և դա Ինձ չի ցնցի:

Մեղքը կյանքի փաստ է: **Շատ քիչ հոգիներ, ներառյալ ընտրյալ հոգիները, կարող են մնալ շնորհի վիճակում երկար ժամանակ:**

Երբեք մի կարծեք, թե չեք կարող խոստովանել ձեր մեղքերը, անկախ նրանից, թե դրանք որքան լուրջ կարող են լինել:

Եթե վախենաք Ինձնից և շարունակեք ձեր մեջքը շրջել դեպի Ինձ, դրանով դուք ձեզ Ինձնից էլ ավելի կհեռացնեք:

Իմ զավակներից շատերն իրենց արժանի չեն համարում Իմ սիրուն: Չնայած դրան, Ես սիրում եմ յուրաքանչյուրին, ներառյալ կարծրացած մեղավորներին: Ես չեմ հաշտվում մեղքի հետ: Ես երբեք դա չեմ անի: Բայց Ես սիրում եմ մեղավորին:

Մեղքի պատճառով էր, որ Ես ուղարկվեցի ձեր աշխարհ որպես Փրկիչ, որպեսզի դուք ներում գտնեք:

Ներում ստանալու համար դուք պետք է ներողամտություն խնդրեք: Երբ ներում եք փնտրում, առաջին հերթին պետք է խոնարհ լինեք: Քանի որ առանց խորնարհության չկա ճշմարիտ խղճի խայթ:

Ես՝ ձեր Փրկիչը, **խնդրում եմ ձեզ կանգ առնել և մտածել, թե ինչպես եք ապրում ձեր կյանքը:** Դուք կամ սիրում եք Աստծուն ձեր լավ գործերով և հարևանի հանդեպ սիրով, կամ չեք սիրում:

Ինձ ճանաչելու կարիք չկա, որպեսզի սիրեք Ինձ, զավակներս: Ձեր գործերով, միմյանց հանդեպ ձեր սիրով, այն բարությամբ և առատաձեռնությամբ, որ ցույց եք տալիս ուրիշների հանդեպ, դուք ցուցադրում եք Ինձ ձեր սերը՝ առանց դա հասկանալու:

Նաև ձեր սրտի խոնարհությամբ, երբ դուք Ինձ ցույց տաք ճշմարիտ խղճի խայթ կյանքում ձեր բոլոր արած սխալների համար, այդ դեպքում նույնպես դուք կապացուցեք Իմ հանդեպ ունեցած ձեր սերը:

Ուրիշ ի՞նչ կերպ եք կարծում, որ կարող եք մոտենալ Իմ Սրտին:

Դուք երբեք չպետք է վախենաք Ինձ մոտենալ: Ես երբեք հեռվում չեմ:

Եկեք Ինձ մոտ հիմա, որպեսզի Ես կարողանամ սնել ձեր հոգին և տալ ձեզ այն խաղաղությունը, որին ձգտում եք:

Ձեր Սիրող Հիսուս

Կույս Մարիամ. <<Երկրորդ Գալստյան համար մարդկությանը ազատագրելու պլանն ավարտված է>>

Հինգշաբթի, 22 դեկտեմբերի, 2011թ, առավոտյան ժ 09:30

Զավակս, աշխարհը պետք է նախապատրաստվի Իմ Որդու համար աղոթքի միջոցով:

Իմ թանկագին Որդու պլանը՝ ազատագրելու մարդկությանը Երկրորդ Գալստյան համար, ավարտված է:

Ժամանակ է տրվել թույլ տալու համար որ հավատը տարածվի այս և մյուս աստվածային պատգամների միջոցով:

Նույնիսկ նվիրված քրիստոնյաների մի փոքր խումբը, որ աղոթում է նրանց համար, ովքեր ժխտում են Իմ որդուն, կարող է փրկել այդ հոգիներին:

Դու, զավակս, շատ խնդրիր, որպեսզի որքան հնարավոր է շատ հետևորդներ **աղոթեն** մեղքի մեջ գտնվող այդ խեղճ հոգիների **հոգիների անվարակելիության համար**:

Ես կոչ եմ անում Իմ Որդու բոլոր հետևորդներին՝ երբեք հույսը չկտրել ողջ մարդկության համար:

Շատ խեղճ հոգիներ չեն հասկանում, թե ինչ են անում, երբ մերժում են Աստծո՝ Հավիտենական Հոր գոյությունը:

Նրանց մտքերը թելադրվում են մարդկային բանականությամբ, ուր ամեն ինչ հիմնված է նրա վրա, թե ինչպես են դրանք երևում մերկ աչքով:

Նրանք չեն կարողանում հասկանալ, որ **երկրը պարզապես մի մոլորակ է,** որը ստեղծվել է Աստծո կողմից Իր զավակների համար: Այն սոսկ մի ժամանակավոր վայր է:

Նոր Դրախտն է նրանց ճշմարիտ ժառանգությունը:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք այդ զավակների համար, որպեսզի Սուրբ Հոգին դիպչի նրանց հոգիներին և նրանց սրտերի մեջ սեր խոսի Իմ Որդու հանդեպ:

Երբեք մի մոռացեք, որ Սուրբ Ծնունդը մի Սուրբ Տոն է, տոնելու համար Փրկչին, ով ուղարկվեց տալու համար ձեզ բոլորիդ հավիտենական կյանք, զավակներս:

Ձեր օրհնյալ Մայր

Երկնքի Թագուհի

Հայր Աստված. Իմ Որդին ուղարկվում է՝ պահանջելու համար իրավամբ իրեն պատկանող գահը

Շաբաթ, 24 դեկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 06:00

Աղջիկս, ճիշտ ինչպես Ես առաջին անգամ Փրկիչ ուղարկեցի աշխարհ որպեսզի փրկի մարդկությանը, **հիմա Ես պատրաստ եմ ուղարկել Իմ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ մարդկության Ազատարարին,** մեկ անգամ ևս, փրկելու համար այն հոգիներին, ովքեր այլ կերպ չէին կարող փրկվել:

Իմ զավակները պետք է հասկանան այն դառը քաղցր զոհաբերությունը, որ Ես կատարեցի մարդկության համար, երբ Ես առաջին անգամ ուղարկեցի Իմ Որդուն:

Երբ Ես հասկացա, որ մարդկությանն ազատագրելու միակ ուղին Փրկիչ ուղարկելն էր, **Ես գիտեի, որ չեմ կարող ակնկալել որևէ մարգարեից կամ ընտրյալ հոգուց այդպիսի զոհաբերությամբ տառապել:** Ես որոշեցի Իմ Աստվածային Էության երկրորդ անձի միջոցով, որ Ես կուղարկեմ մի Որդի մարդկությանը փրկելու համար: Սա միակ արդյունավետ միջոցն էր հակադրվելու Սատանայի պլաններին. Այսպիսին էր Իմ զավակների հանդեպ ունեցած Իմ սերը:

Տեսնել Իմ Որդու հասակ առնելը, նրա տղամարդ դառնալը, ուրախալի էր և ցավալի միաժամանակ՝ իմանալով, թե ինչ է նրան սպասվում առջևում: Այո, Իմ զավակներից յուրաքանչյուրի հանդեպ Իմ ունեցած խորը քնքուշ սիրո պատճառով սա մի զահաբերություն էր՝ կամովին կրած, Իմ ընտանիքը փրկելու համար:

Հիմա, երբ Նախազգուշացումը մոտենում է, Ես նույնպես նախապատրաստում եմ Աշխարհը այս Սուրբ պատգամների միջոցով, Իմ Որդուն Երկրորդ Անգամ ողջունելու համար:

Իմ սիրելի Որդու Երկրորդ Գալուստը մոտ է, զավակներս: Նա ուղարկվում է, որ պահանջի իրավամբ իրեն պատկանող գահը, երբ նա կթագավորի որպես մարդկության Թագավոր:

Այս փառահեղ իրադարձությունը կլինի տեսողական, և **Մարդկային ռասան** ձեր աշխարհում գոյություն ունեցող չարից **փրկելու պլանի վերջնական մասն է:** Շուտով Սատանան դուրս կշպրտվի: Նրա հետևորդները և չար սիրտ ունեցողները կցնցվեն և կշփոթվեն: Այդ էտապում նրանցից ակնկալվում է ընտրություն կատարել: Վայր իջնել և գթասրտություն աղերսել և փրկվել: Կամ էլ մերժել այն մեծ ընծան, որը կներկայացվի իրենց:

Զավակներս, **միավորվեք դուք բոլորդ և մի վախեցեք ծաղրից:** Դուք բոլորդ առաջնորդվում եք Սուրբ Հոգու միջոցով և ձեզ տրվում է Երկնքի հրեշտակների և սրբերի պաշտպանությունը: Ձեզանից է կախված, Իմ հետևորդներ, հռչակելու Իմ Որդու խոսքը և խոստումը, ով ցանկանում է, որ այս պատգամները տարածվեն աշխարհով մեկ:

Նաև ձեր աղոթքների միջոցով է, որ կորած մեղավորները կկարողանան պոկվել չարի բազուկներից:

Զավակներս, դուք վերջնական մարտի սկզբնական էտապում եք: Իմ սիրելի Որդու գթասրտության միջոցով ձեզ տրվում է ձեր հավիտենական փրկության երկրորդ հնարավորությունը: Մի վատնեք այդ հնարավորությունը: Միացեք որպես մեկ Երկնքում գտնվող ձեր ընտանիքի հետ միության մեջ փրկելու համար ձեր եղբայրներին ու քույրերին երկրի վրա:

Ուրախացեք այս Սուրբ Ծննդյան ժամանակ, քանի որ դա կլինի մի յուրահատուկ տոն, որովհետև հիմա դուք պետք է օգնեք հոգիներին նախապատրաստվելու Իմ Որդու Երկրորդ Գալստյանը, Նախազգուշացման տեղի ունենալուց հետո:

Եզ ձեզ բոլորիդ սիրում եմ, զավակներս: Վերցրեք Իմ սերը: Գրկեք Ինձ՝ ձեր Հավիտենական Հորը, ով հնարավոր ամեն ինչ կանի ձեզ բոլորիդ Խաղաղության Նոր Դարաշրջան տանելու համար:

Հայր Աստված

Պատվեք ընտանիքի կարևորությունը

Կիրակի, 25 դեկտեմբերի, 20011թ, երեկոյան ժ 06:00

Այսօր, աղջիկս, Իմ ծննդյան տոնն է: Այն նաև յուրահատուկ օր է ընտանիքների համար:

Հիշեք, որ Սուրբ Ընտանիքը նույնպես ծնվեց այսօր: Այդ Սուրբ Ընտանիքն այսօր առնչություն ունի մարդկանց վրա ողջ աշխարհով մեկ:

Ճիշտ ինչպես երկրի վրա բոլոր հոգիները Իմ Հավիտենական Հոր ընտանիքի մի մասն են կազմում, հետևաբա ըմարդիկ պետք է նաև ամենուր **պատվեն ընտանիքի կարևորությունը:**

Միայն ընտանիքի միջոցով է, որ ծնվում է ճշմարիտ սերը: Մինչ շատ ընտանիքներ աշխարհում տառապում են պառակտումից, զայրույթից և անջատումից, կարևոր է հասկանալ հետևյալը:

Եթե **երկրի վրա ընտանիքներ չլինեին, կյանք չէր կարող լինել:** Ընտանիքը ներկայացնում է այն ամենն, ինչ Իմ Հավիտենական Հայրը ցանկանում է Իր զավակներին երկրի վրա:

Երբ ընտանիքը միասին է, այն ստեղծում է մի այնպիսի մտերմիկ սեր, որը միայն Երկնքում է հայտնի: Վնասեք ընտանիքին, և դուք կվնասեք այն մաքուր սիրուն, որը գոյություն ունի ընտանիքի մաս կազմող յուրաքանչյուր հոգու մեջ:

Սատանան սիրում է բաժանել ընտանիքները: Ինչու՞: Որովհետև նա գիտի, որ սիրո միջուկը, որն էական է մարդկության հոգևոր աճի համար, կմեռնի, երբ ընտանիքը կիսվի:

Խնդրում եմ աղոթեք զավակներս, որ ընտանիքները միավորվեն: Աղոթեք, որ ընտանիքները միասին աղոթեն: Աղոթեք, ետ պահելու համար Սատանային ձեր տան ընտանիքի մեջ մտնելուց:

Երբեք մի մոռացեք, որ դուք բոլորդ Իմ Հոր ընտանիքի մասն եք կազմում, և դուք պետք է հետամուտ լինեք երկրի վրա այդ միությանը ամեն հնարավոր դեպքում: Ես գիտեմ, որ դա միշտ հնարավոր չէ, սակայն միշտ ձգտեք ընտանիքի միասնության, որպեսզի պահպանեք միմյանց հանդեպ սերը:

Եթե երկրի վրա ընտանիք չունեք, ապա հիշեք, որ դուք այն ընտանիքի մի մասն եք, որն Իմ Հայրն է ստեղծել: Ձգտեք միանալու Իմ Հոր ընտանիքին Խաղաղության Նոր Դարաշրջանում:

Աղոթեք այն շնորհների համար, որոնք անհրաժեշտ են, որ կարողանաք գտնել իրավամբ ձեզ պատկանող տունը այդ Նոր Դրախտի մեջ, ուր ձեզ կհրավիրեն մտնել Իմ Երկրորդ Գալուստից հետո:

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Փրկիչ

Ինձ մեղադրում էին հերետիկոսության և հայհոյելու մեջ երբ Ես քայլում էի երկրի վրա

Երկուշաբթի, 26 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:50

Ես քո Հիսուսն եմ, ով երբեք քեզ չի լքում անկախ նրանից, թե որքան ես տառապում: Ես Ալֆան եմ և Օմեգան, Աստծո Որդին՝ մարդեղացած և ծնված Անարատ Կույս Մարիամից:

Իմ սիրելի Աղջիկ, բարձրացիր տառապանքի այդ հանկարծակի պոռթկումից և երբեք մի մոռացիր այն հոգիների թիվը, որոնց դու փրկում ես այդ ընթացքում:

Իմ զավակները պետք է տառապեն մաքրագործմամբ, որպեսզի նրանց հոգիները մաքրվեն այս ժամանակ: Ուստի նրանք պետք է վարժվեն դրան: Իմ զավակներից շատերն են դեռևս շարունակում մաքրագործվել Նախքան Նախազգուշացումը տեղի կունենա: Ժամանակի ընթացքում նրանք կհասկանան թե ինչու է դա տեղի ունենում իրենց հետ, աղջիկս:

Հրեշտակները միշտ քեզ հետ են ինչպես երբեք: Քանի որ դու, աղջիկս, հիմա դու կգրավես մինչ այժմ եղած գրոհների ամենամեծ թիվը (քեզ վրա), այս պատգամների պատճառով:

Հիմա Իմ արտաբերած յուրաքանչյուր խոսք կմասնատվի:

Հիմա յուրաքանչյուր դաս և ճշմարտություն, որ Ես տալիս եմ աշխարհին, քննության կենթարկվի և կդատարապարտվի որպես հայհոյություն:

Իմ Սուրբ Խոսքը, երբ ասվում էր Իմ հետևորդներին երբ Ես քայլում էի երկրի վրա, նույնպես քննադատվեց:

Ինձ մեղադրում էին հերետիկոսության, հայհոյության և մեղավորներին թողություն տալու համար, երբ Ես քայլում էի Իմ ժողովրդի մեջ: **Այդ ժամանակ Իմ խոսքը չընդունվեց շատ մասերում** և հատկապես քահանաների և փարիսեցիների մեջ:

Աղջիկս, այդ մարդիկ, որոնք պարծենկոտ ձևով խայթում են իրենց ինքնակոչ հոգևոր գիտելիքի պատճառով, կլինեն ամենավատ վիրավորողները: Նրանք մեծամտորեն կվիճաբանեն, որ Սուրբ Կտակարանի իրենց սահուն մեկնաբանությունը ավելի կարևոր է, քան ճշմարատությունը:

Նրանց հպարտությունն արգելում է իրենց Իմ ձայնը ճանաչելուց, երբ այն այսօր տրվում է աշխարհին:

Երբեք մի ներգրավվիր այդ հոգիների հետ (կռվի մեջ), աղջիկս, քանի որ նրանք լույսից չեն: Տխուր է, սակայն նրանք հավատացած են, թե իրենք լույսից են: Հիշիր, նրանք, ովքեր վերևից են նայում և ծաղրում են մարդկանց Իմ անունով, Ինձնից չեն:

Նրանք ցույց չեն տալիս սեր, հասկացողություն կամ խոնարհություն:

Այս հարձակումներն ավելանում են, որ կանգնեցնեն քեզ այս աշխատանքը կատարելուց և քո մտքում նոր կասկածներ ստեղծեն: Աղոթիր այդ մարդկանց համար: Անտեսիր նրանց: Ուշադրությունդ կենտրոնացրու միայն Իմ ձայնի վրա և թույլ մի տուր որ այս սրբազան աշխատանքն ազդվի դրանից:

Սատանան ակտիվորեն աշխատում է այդ հոգիների մեջ և կօգտագործի խաբեբա փաստարկներ, որ կործանի Իմ շուրթերից եկող այս պատգամները: Նրգրավվելով կամ պատասխանելով այդ հարձակումներին, դու Սատանային տալիս ես այն ուժը, որը նա փնտրում է:

Գնա հիմա խաղաղությամբ: Շարունակիր առաջ նայել և մնա ենթարկվող Իմ ցանկություններին միշտ: Հիշիր, դու Ինձ ես տվել ազատ կամքի քո ընծան: Ուստի, թույլ տուր Ինձ առաջնորդել քեզ: Ամբողջապես Ինձ վստահիր:

Ես սիրում եմ քեզ:

Քո Հիսուս

Կույս Մարիամ. Երկունքի ցավերն սկսվել են

Երեքշաբթի, 27 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 02:00

Զավակս, երկունքի ցավերն սկսվել են:

Եկել է **մի Նոր աշխարհի ծննդյան, մի նոր սկզբի** ժամանակը:

Հիմա երկրի վրա շատ փոփոխություններ տեղի կունենան, որոնց նմանը նախկինում երբեք չի տեսնվել:

Իմ Երկնավոր Հայրն ուղարկում է Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսին, որ մեկ անգամ ևս փրկի մարդկությանը իր չարությունից:

Դու, զավակս, ականատես կլինես մի շարք իրադարձությունների, որոնք արդեն բացահայտվել են քեզ:

Դու չպետք է վախենաս, քանի որ **այս մաքրագործումն էական է որպեսզի արթնացնի մարդկությանը,** եթե հոգիները պետք է փրկվեն:

Նշանները կսկսվեն ինչպես կանխասացվել է: Իմ զավակները պետք է ընդունեն այդ փոփոխությունները խոնարհ և զղջացող սրտով:

Աղոթեք, աղոթեք, որ հոգիները հրաժարվեն հպարտության մեղքից և ներողամտություն փնտրեն Հայր Աստծո դեմ:

Նրանց՝ իրենց (մեղքերը) քավել չկարողանալը կհանգեցնի մի դաժան պատժի:

Իմ որդու գթասրտությունն այնքան մեծ է, որ նա ժամանակ կտա Իմ զավակներին ապաշխարելու:

Բայց դուք պետք է աղոթեք բոլոր հոգիների համար, որպեսզի նրանք արժանի լինեն մտնել Խաղաղության Նոր Դարաշրջանը:

Ձեր Սիրող Մայր

Մարիամ Երկնքի Թագուհի

Հայր Աստված. <<Ընդունեք այս վերջին հնարավորությունը կամ կանգնեք սոսկալի պատժի առջև

Չորեքշաբթիմ 28 դեկտեմբերի, 2011թթ, ցերեկվա ժ 03:15

Աղջիկս, դու հիմա պարտականություն ունես տեղեկացնելու համար Իմ զավակներին ամենուրեք թողություն փնտրելու հրատապ անհրաժեշտության մասին:

Իմ մեծ գթասրտության պատճառով Ես հիմա ուղարկում եմ Իմ Որդուն, որ մարդկությանը դեպի Ինձ՝ իրենց Երկնավոր Հորը շրջվելու մի վերջին հնարավորություն առաջարկի:

Ես կարող եմ բացահայտել, որ Իմ բոլոր զավակներին ցույց տրվելիք մեծ Գթասրտությունը **տեղի կունենա միայն մեկ անգամ:**

Նրանք՝ Իմ զավակները, պետք է ընդունեն փրկության այս վերջին հնարավորությունը կամ **ընդունեն, որ մի սարսափելի պատիժ կիջնի աշխարհի վրա:**

Յուրաքանչյուր հոգի երկրի վրա շուտով ականատես կլինի գիտակցության լուսավորման նշաններին:

Նրանցից յուրաքանչյուրն ամոթով ծնկի կբերվի երբ տեսնեն, հավանաբար առաջին անգամ, թե որքան ցավոտ են Իմ աչքում երևում իրենց մեղքերը:

Բարի և խոնարհ սիրտ ունեցողները կընդունեն այս մեծ գթասրտությունը երախտագիտությամբ և թեթևության զգացողությամբ:

Մյուսների համար այն կլինի չափազանց դժվար փորձություն, և շատերը կմերժեն սիրո և ընկերակցության Իմ ձեռքը:

Շտապ աղոթեք այդ հոգիների համար, աղջիկս, քանի որ առանց աղոթքների նրանց չի կարող հնարավորություն տրվել երկրորդ անգամ:

Աշխարհը վերջապես կընդունի իրենց Երկնավոր Հոր զորությունը, երբ **երկնքում հրաշքին ականատես կլինեն բոլորը ամենուրեք:**

Նոր աշխարհի ծնունդը համարյա ձեզ վրա է: Բռնեք Իմ գթասրտությունը հիմա, քանի դեռ կարող եք: Մի թողեք այն մինչև վերջին պահը:

Միավորվեք որպես մեկ Ինձ հետ միության մեջ, որ գրկեք **Խաղաղության Նոր Դարաշրջանը, որը սպասում է բոլոր այն թանկագին հոգիներին, ովքեր սիրում են Ինձ:**

Իմ Գթասրտությունն այնքան մեծ է, սակայն, որ անվարակելիության համար Իմ Որդու կողմից քեզ տրված աղոթքն, աղջիկս, այդ հոգիների համար, (տես ստորև մի հատված խաչակրաց արշավանք 13-ից), այնքան հզոր կլինի, որ այն հոգիները, որոնք դեռևս խավարի մեջ են, կարող են փրկվել և կփրկվեն:

Ոհ, Երկնավոր Հայր, Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի սիրո միջոցով, ում տառապանքը խաչի վրա փրկեց մեզ մահից, խնդրում եմ փրկիր բոլոր նրանց, ովքեր դեռևս ժխտում են Նրա Գթասրտության ձեռքը:

Հեղեղիր նրանց հոգիները, սիրելի Հայր, քո սիրո նշանով:

Ես խնդրում եմ Քեզ, Երկնավոր Հայր, լսիր իմ աղոթքը և փրկիր այդ հոգիներին հավիտենական դատապարտությունից: Գո գթասրտությամբ թույլ տուր նրանց լինել առաջինը մտնելու Երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջան: Ամեն:

Հիշեք, զավակներս, աղոթքի ուժը, և թե ինչպես այն կարող է մեղմացնել երկնային պատիժը:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ աշխարհը կարողանա և կփրկվի, և որ **Մեծ Դժբախտությունը կարողանաք կասեցնել:**

Ձեր Երկնավոր Հայր

Աստված Ամենաբարձրյալ

Կույս Մարիամ. <<Իմ Վարդարանը կարող է ազգեր փրկել>>

Հինգշաբթի, 29 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 02:15

Զավակս, Իմ Սուրբ Վարդարանն աղոթելը կարող է ազգեր փրկել:

Իմ զավակները երբեք չպետք է մոռանան Իմ Սուրբ Վարդարանի զորությունը:

Այնքան զորեղ է այն, որ խաբեբային անօգնական է դարձնում: **Նա ոչ մի բան չի կարող անել քեզ և քո ընտանիքին, երբ դու այն աղոթում ես ամեն օր:**

Խնդրում եմ, խնդրիր Իմ զավակներին այսօրվանից սկսած ամեն օր ասել Սուրբ Վարդարանը, որպեսզի պաշտպանեն ոչ միայն իրենց ընտանիքները, այլև իրենց համայնքները:

Վարդարանը ամենազորեղ զենքն է Չարի պլանների դեմ՝ երկրի վրա իր այս վերջին օրերի ընթացքում ոչնչացնելու այն ամենն, ինչ կարող է:

Երբեք մի թերագնահատեք այն ստերը, որոնք նա դնում է մարդկանց մտքերի մեջ, որպեսզի Իմ զավակներին շրջի ճշմարտությունից:

Այնքան շատերը, նրա ազդեցության տակ, ոտքով կհարվածեն և կկռվեն Իմ Որդու Մեծ Գթասրտության դեմ:

Իմ Սուրբ Վարդարանն աղոթելով դուք կարող եք պաշտպանել այդ հոգիներին ստերից:

Նրանց սրտերը կարող են բացվել և կբացվեն, եթե ժամանակ հատկացնեք Իմ Վարդարանն աղոթելու համար:

Աղոթեք, հիմա, որ Իմ զավակները բացեն իրենց սրտերը ճշմարտության հանդեպ: Աղոթեք նաև, որ Իմ բոլոր զավակները ուշ գտնեն ընդունելու Իմ Որդու գթասրտությունը:

Ձեր սիրող Մայր

Հրեշտակների Թագուհի

Ամեն տեսակի Գթասրտություն ցույց կտրվի նրանց, ովքեր չեն սիրում Իմ Հորը

Հինգշաբթի, 29 դեկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:00

Իմ սիրելի թանկագին աղջիկ, շուտով Իմ զավակներն ամենուր կարթնանան խորը դատարկ թմբիրից:

Երբ նրանք արթնանան Նախազգուշացման հանդեպ, շատերը սարսափի կմատնվեն: Նրանք, ովքեր կվախենան, Ես հետևյալն եմ ասում:

Շնորհակալ եղեք, ձեզ արթնացնում են խավարից:

Ուրախ եղեք, որ ձեզ ցույց է տրվում Գթասրտության Իմ լույսը: Եթե այն ձեզ համար ցավոտ լինի, ապա Ես խնդրում եմ ձեզ դիմանալ այդ մաքրագործմանը խոնարհությամբ: Քանի որ առանց այդ մաքրագործման դուք հավիտենական կյանք չեք ունենա, որը ձեր իրավունքն է:

Աղոթեք Ինձ օգնության համար այդ դժվարին պահերի ընթացքում, և **Ես ձեզ վեր կբարձրացնեմ և կտամ այն ուժը, որի կարիքն ունեք:**

Մերժեք Իմ Գթասրտության ձեռքը, և դուք շատ կարճ ժամանակ կունենաք ապաշխարելու համար:

Ձեզնից նրանց, ովքեր չեն սիրում Իմ Հորը, ցույց կտրվի ամեն տեսակի գթասրտություն: Բայց իմացեք, որ Նրա համբերությունը սպառվում է:

Գթասրտության մի մեծ գործողություն ցույց կտրվի: Ձեզնից կախված կլինի խոնարհ դառնալն ու Նրա գթասրտությունը խնդրելը: Ձեզ չեն կարող ստիպել այդ անել:

Աղոթեք, որ եթե չկարողանաք դիմանալ այդ մաքրագործմանը, որպեսզի ուրիշներն աղոթեն ձեր հոգու համար:

Երբեք մի վախեցեք Ինձնից: Երբեք մի մերժեք փրկության Իմ Ձեռքը: **Քանի որ առանց Ինձ դուք ոչինչ եք:** Մի սպասեք կանչելու համար Իմ սերը, երբ արդեն չափից դուրս ուշ կլինի ձեզ օգնելու համար:

Ձեր փրկիչ

Հիսուս Քրիստոս

Առանց Իմ Գթասրտության Գործողության ազգերը կոչնչացնեն միմյանց

Շաբաթ, 31 դեկտեմբերի, 2011թ, կեսօրվա ժ 12:00

Հատված մասնավոր պատգամից, որը տրվել է Մարիա Աստվածային Գթասրտությանը, որը ներառում է աղոթքի խաչակրաց արշավանք 16-ը, որպեսզի մարդիկ ընդունեն Նախազգուշացման ընթացքում Հիսուսի տված ընծաները, և խոստում՝ աշխարհին Նրա Ամենասուրբ Խոսքը հռչակելու համար:

Աղջիկս, Նախազգուշացումը բոլորին կապացուցի Իմ այս սուրբ պատգամների վավերականությունը աշխարհին: Դու երբեք չպետք է կասկածես դրանց: Պատգամներից ոչ մեկը ոչ մի ձևով չի թունավորվել:

Նախապատրաստվիր Նախազգուշացմանը և ասա քո ընտանիքին ու երեխաներին մի փոքրիկ աղոթք ասել իրենց մեղքերի թողության համար:

Հիմա Ես քեզ կտամ աղոթքի մի հատուկ խաչակրաց արշավանք աշխարհին (16), որ օգնի հոգիներին ուժեղ մնալ Գթասրտության այդ Մեծ Գործողության ընթացքում, որը Ես հիմա կներկայացնեմ աշխարհին:

<<Ոհ, իմ Հիսուս, ինձ ուժեղ պահիր Քո Մեծ Գթասրտության այս փորձության ընթացքում

Տուր ինձ անհրաժեշտ շնորհները, որ փոքր դառնամ Քո աչքում,

Բաց իմ աչքերը Հավիտենական Փրկության Քո խոստումի ճշմարտության հանդեպ,

Ներիր ինձ իմ մեղքերը և ցույց տուր ինձ Քո սերն ու ընկերակցությունը,

Գրկիր ինձ Սուրբ Ընտանիքի բազուկների մեջ, որպեսզի մենք բոլորս կարողանանք նորից մեկ դառնալ,

Ես սիրում եմ քեզ Հիսուս և խոստանում, որ այսօրվանից կհռչակեմ Քո Սուրբ Խոսքը

Առանց վախի իմ սրտում և հոգու մաքրությամբ, հավիտյանս հավիտենից, ամեն:

Երբեք չվախենաք Իմ Գթասրտության այդ մեծ գործողությունից, որը պետք է տեղի ունենա, այլապես ազգերը կոչնչացնեն միմյանց:

Մարդկության մեծ մասը դարձի կգա, սակայն հոգիների համար պայքարը կուժեղանա:

Ձեր սիրող Հիսուս,

Մարդկության Ազատարար